

Առեւունիչն
Տաշտարակի
Համբայինքը —
— Ենիցքաղի
Կայուսանելը



9(47.925), 1944-45 7595

U-73 Unjaniyan

Հայուսական պահանջմանը

Լինքոնց պահանջմանը.

In-804.

9/47.925/27

11-73

Համունմ մեր Սովորության Հայրենիքի.

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՌԱԶՄԱՔԱԿԱՏԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՅՑՈՒՆ

Ապրիլ 1981 թ.

~~7595~~ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԱՎԱԿՆԵՐԸ—
ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

A/I
2011



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

1 9 4 6

СЫНЫ СОВЕТСКОЙ
АРМЕНИИ – ЗАЩИТНИКИ
ЛЕНИНГРАДА

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1946 г.

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ
գաֆան ստուդումը բացահայտ կերպով ցուց
ավեց Սովետական Միության ժողովուրդների
բարեկամության ամրությունն ու անխորտակե-
լիությունը:

«Մեր Երկրի ժողովուրդների բարեկամու-
թյունը, — ասում է ընկեր Ստալինը, — դիմացավ
պատերազմի բոլոր դժվարություններին ու փոր-
ձություններին և է՛լ ավելի կոփվեց ֆաշիստա-
կան զավթիչների դեմ սովետական բոլոր մարդ-
կանց մղած ընդհանուր պայքարում»:

Այդ բարեկամությունը հանդիսացավ թշ-
նամու՝ ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ
տարած մեր մեծ հաղթանակի հղոր գործոններից
մեկը։ Այդ ցայտուն կերպով երեան եկավ Աս-

նինդրադյան Հոյակապ էպոպեմ: Ոռուսական
մեծ քաղաքը պաշարած գերմանական Յրուսա-
կախմբերի դեմ մղած տիտանական պալքարի
օցերին լինինդրադյաները միայնակ չեն: Լենին-
դրադի Հերոսների հետ նույն խոհերով, նույն
զգացումներով ապրում էր մեր սովետական մեծ
ամբողջ երկիրը, նրանց օգնում, նրանց մասին
հոգում էին մեր անընդպարիելի Հայրենիքի բոլոր
ժողովուրդները:

Սովետական Միության բազմաթիվ ժողո-
վուրդների զավակները՝ ուկրաինացիներ, բելո-
ռուսներ, ուղբեկներ, տաջիկներ, կազախներ,
հայեր, վրացիներ և ուրիշներ՝ գտնվելով լենին-
դրադի սազմաճակատի զորամասերում և Կարմ-
րադրոշ Բալթիական նավատորմի նավերում,
իրենց ոռւս ընկերների հետ ուսու-ուսի տված՝
անձնվիրաբար ու խիզախորեն կովում էին գեր-
մանական զավթիչների դեմ: Նրանք պաշտպանե-
ցին լենինդրադը, թշնամուն քշեցին դեպի Արև-
մուտք և վերջնականապես նրան ջախջախեցին
Գերմանիայի տերիտորիայում՝ նվաճելով լիակա-
տար հաղթանակը:



Այս գրքույկի մեջ զետեղված են ակնարկներ մեր Հայրենիքի եղբայրական ժողովուրդներից մեկի ներկայացուցիչների՝ Սովետական Հայաստանի փառապանծ զավակների մասին, որոնք հերոսաբար պաշտպանեցին Լենինգրադը: Նրանք Լենինգրադի ուրիշ շատ պաշտպանների նման՝ արիաբար ու խիզախորեն կովում էին թշնամուդեմ, ներդնելով իրենց պատերազմական աշխատանքը թշնամու նկատմամբ տարված մեր ընդհանուր հաղթանակի գործում:

Նրանց սխրագործությունները երբեք չեն մոռանա լենինգրադցիները, նրանց փառապանծ գործերով ըստ արժանվույն կհպարտանա Սովետական Հայաստանի ժողովուրդը:

ՄԵԾ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Պատերազմում լինում են հզոր ճակատամարտեր, որտեղ բախվում են հսկայական մասսաներ, որտեղ մերկացված թրերը շողացնելով սլանում է հեծելազորը, ուղեկից ունենալով երկնային հեծելազորին՝ կործանիչներին և դաշտերի նոր կավալերգարդերին՝ ծանրազրահ տանկերին. բայց և փոքր ընդհարումների ժամանակ էլ զոհվում են մարտիկներ, ծնվում. են հերոսներ:

Պատահական արկից զոհվում են մեծ ճակատամարտերի ողջ դժոխքը տեսած և ամենադաժան գրոհները կրած հրամանատարները; Այդպես զոհվեց անվեհեր ու տոկուն բոլցկիկ մարտիկ Բենիամին Հովհաննեսի Գալստյանը; Լենինգրադի ռազմաճակատում ո՞վ չեր ճանաշում Գալստյանին: Ես հիշում եմ նրան դեռևս Կարելական պարանոցի անտառներում, «Մաններհայմի գծի» առջե, դաժան սառնամանիքին ու բքին, ցուրտ անտառում՝ մահաքեր կրակի տակ սպիտակփիննական դօսերի առաջավոր գիծը շրջանցելիս: Ես տեսել եմ նրան Շիմսկի



Բ. Հ. Գալստյան

անտառներում 1941 թվի օգոստոսյան կիզիշ
օրերին, տեսել եմ նրան առաջավոր գծում՝
Նեայի մոտ գտնվող դաշտավայրի ժանգոտած
թփուտներում, որտեղ հեռվում սկին էին տալիս
իժորսկի գործարանի ծխնելույզները և ամեն
տեսակի ոռնոցներով օդն էին ձեղքում գերմա-
նական ոռւմբերը:

Գալստյանն այն մարդկանցից էր, որոնց
հետ կապվում ես սրտանց։ Նա բարի ու կարեկից
մարդ էր, անվախ ու վճռական։ Ամբողջ հոգով
ատում էր վախկոտներին։ Նա խոսում էր պարզ,
և նրա խոսքերում ժողովրդական ճշմարտություն
կար, որովհետև ինքն էլ հենց հասարակ ժո-
ղովրդի զավակ էր, մեզ մոտ էր եկել հեռվից՝
շերմ, կեռնային Հայաստանից։ Նրա խոսքերում
կար հարավի միշտ հուզող մարդու խառնվածքը։
Ինչպես էր նա սիրում քաջ, տոկուն մարդկանց։
Նրա ծոցատերում միշտ գրված էին լինում նոր
անուններ և հասարակ դեպքեր, և այդ անուններն
ու դեպքերը նրա մոտ քիչ չէին։ Ես հիշում եմ
մի այսպիսի խոսակցություն։ Նրա ոճը յուրա-
տեսակ էր, մտերիմ ու հասկանալի։ Նա ասում
էր.

— Գրիր, խնդրեմ, սա մի այնպիսի կտրիծն է, որոնցից քշերը կան:Տե՛ս, թե ինչ է արել նա: Նա ամենից առաջինը, հասկանում ես, ամենից առաջինը գերմանացիներին կրնկակոխ հետապնդելով՝ ներխուժեց Սոլցի, ամենից առաջինը գրավեց աերոդրոմը: Վաշտի հրամանատարը վիրավորվեց, նա ասում է, «Ես եմ հրամանատարը», նրանց առաջ է տանում, խփում է լուսականներին, քշում է: Նա այդպիսի մարդ է, խնդրում եմ, նրան գրի առ հիշողության համար: Նա կոմերիտական Ալեքսեևն է՝ Նիկոլայ Ալեքսանդրովիչը...

Մի ուրիշ անգամ, երբ խոսում էին երեակայական և իսկական խիզախության մասին, նա ասաց.

— Բայց գիտես ինչ. ա՛յ, ինձ մոտ կա մի քաղղեկ՝ Գուբկոն: Առանձնակի ոչինչ չունի: Նրա գործը — ռազմամթերք տեղափոխելն է: Աննկատելի մի գործ: Այնտեղ կրակում են, իսկ դու տեղափոխիր: Հիմա ի՞նչ կասես, կտրի՞ճ է նա, թե ոչ: Դե եկ, գուշակիր: Եսկ ես քեզ կասեմ, որ նա կտրիճ է: Ինչո՞ւ: Որովհետեւ եթե ռազմամթերք չկա՝ գործողությունը կարող

է կանդ առնել. ուշացավ ուզմամթերքը՝ դըժ-
բախտություն կպատահի, սիրելի՛ս։ Իսկ եթե
դրանք փոխադրում ես կրակի տակ՝ անհրաժեշտ
է ամուր բնավորություն։ Իսկ եթե ամեն օր
առավոտից մինչև երեկո կրակի տակ փո-
խադրեա՛քանի՛ ամուր բնավորություն պետք է
ունենաս։ Մտածիր ու ասա՛. նա երբե՛ք ո՛չ մի
անգամ չի ուշացրել ուզմամթերքը։ Նա կտրիճ
է, այ քեզ իսկակա՞ն աշխատանք։

Գալստյանին անկեղծորեն սիրում էին մար-
տիկներն ու հրամանատարները, և նրան չէր
կարելի չսիրել։ Նա մահացավ բլինդաժի մեջ
ուղղակի ընկած արկից։ Դա ակնթարթացին, բայց
անարդարացի մահ էր։ Նա մարտի համար
ստեղծված ուզմիկ էր։ Մարտական դադարի ժա-
մանակ պատահական մի արկ ճակատադրական
դարձավ նրա համար։ Գալստյանի անունը մենք
կմտցնենք հերոսների՝ լինինդրադի պաշտպան-
ների անջնջելի ցուցակում։ Կհիշենք նրան ընդ-
միշտ, որպես մեծ քաղաքի սքանչելի հայ-
րենասերի։

ԵԽՈՒԱՅՏ ՏԵԽՈԱՆՈՎ,

(„Լենինգրածայ գօճ“ գրքից):

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԲԵՆԻԱՄԻՆ ԳԱԼՈՍՅԱՆ

Նամակն ստացվել էր Հեռվից: Այդ նամակը
բրել էր ընկեր Կուզմինը: Հինգ տարի շարունակ
Կուզմինը եղել էր Լենինի շքանշանակիր 70-րդ,
այժմ 45-րդ Գվարդիական դիվիզիայի Կարմ-
րադրոշ հառւբիցային գնդի կոմիսարը: Մի այլ
հեռավոր ուղղմանակատից Կուզմինը ողջույն
ուղարկելով հարազատ դիվիզիային՝ հարցնում է.

«Ո՞րտեղ է հիմա մեր մարտական կոմիսար
ընկեր Գալստյանը: Ասացեք, որ մենք հաճախ
հիշում ենք նրան: Հիանալի՝ մարդ է: Սեր դեպի
մարտիկը և հոգատարությունը նրա նկատմամբ՝
Գալստյանի մոտ անխղելիորեն զուգորդվում է
թշնամու հանդեպ ունեցած հրաբորքոք ատելու-
թյան հետ»:

Ահա հակիրճ և ճշգրիտ բնութագիրը փա-
ռապանծ դիվիզիայի ղեկավարներից մեկի, որ
նրա հետ անցել է մարտական մեծ ուղի:

Ի՞նչ էր հիշել Կուզմինը, երբ գրել էր այդ
նամակը: Կոյվիստո-Բիերկայի մոայլ ժայռերը,
թէ՝ պատերազմից հերկված Սոլցի դաշտերը:

...?0-րդ դիվիզիան ճեղքում էր սպառական ֆինների ամրացված շրջանը Կոյվիստո թերակղղում։ Սպիտակֆինները շատ լավ էին հասկանում «Կոյվիստյան սեպի» ստրատեգիական նշանակությունը։ Նրանք այդտեղ թարմ ուժեր էին փոխադրել, և թվական գերակշռությունը նրանց կողմն էր։

Փետրվարի լույս 26-ի գիշերը շատ բարդ դրություն ստեղծվեց։ Սպիտակֆինները անընդհատ հակագրոհում էին մեր ստորաբաժանման վրա, իսկ Գորդենի հրետանային դիվիզիոնում արկերը վերջանալու վրա էին։

Խավար, սառնամանիք գիշեր էր։ Շտաբում մարդիկ տագնապային տրամադրության մեջ էին։ Ընկեր Երեմիշևը թեքվել էր քարտեզի վրա։ Նրա դեմքը մոալլ էր։ Եվ հանկարծ մի հատուկ և ուրախ ձայն հարցնում է։

— Ինչպե՞ս են գործերը, ընկե՛ր պետ։

Արագ կերպով գետնափոր տնակն է մտնում ընկեր Դալստյանը։ Երեմիշևը դիվիզիայի կոմիսարին զեկուցում է դրության մասին։

— Մեր առաջավոր գիծը ճեղքելու վտանգ կա...»

— Գիտե՞մ, — ասում է Գալստյանը:

Նա մոտենում է քարտեղին.

— Ահա այստեղ, Մայսալա դյուլից Հարավ:

— Միանգամայն ճիշտ է, ընկեր կոմիսար,
թեև դա քարտեղի վրա չի երևում...

— Ես հենց նոր այնտեղից եմ գալիս: Մայ-
սալայի մոտ Հարկավոր է մարդիկ ուղարկել՝ կո-
մունիստների: Ուղարկեք նրանց հետ ուտելիք և
օղի: Մեր մարդիկ մրսում են, նրանց պետք է
տաքացնել: Իսկ դուք, ընկե՛ր Կուզմին, անմի-
ջապես մեկնեցեք թիկունքը և անձամբ կաղմա-
կերպեցեք արկերի փոխադրումը:

— Հրամանը կկատարվի, ընկե՛ր Գալստյան:

— Իսկ հիմա լսեցեք իմ բարի խորհուրդը.
մի ճի թամբեցեք և հույս մի՛ զնեք մեքենայի
վրա: Այսպիսի եղանակին մերենան կմատնի,
իսկ ճին երբեք չի՛ դավաճանի:

Կուզմինն այդպես էլ արավ: Շուտով նա
մեր թիկունքումն էր և առաջույան ժամը հին-
գին բեռնատար մեքենաներով արկերն արդեն
փոխադրված էին:

— Հարձակումը շարունակե՛լ, կոտրե՛լ
թշնամու դիմադրությունը, կոտորել, ի՛նչ կնով

էլ լինի, թշնամուն շպրտել սառուցի վրա, —
հրամայեց Գալստյանը:

Սպիտակփինների ուղմանակատը ճեղքվեց
և Մայսալայում, և Կերիում, և Վատնուորիում:
Ֆիններին սեղմեցին դեպի ծովածոցը, շպրտեցին
նրանց սառուցի վրա, որտեղ թշնամու խմբավո-
րումը վերջնականապես ջախջախվեց:

...Դիվիզիան մայր ցամաքի վրա է: Մեր
ստորաբաժանումներից մեկը Հարձակվում էր
Նիսալախտիի վրա՝ նպատակ ունենալով կտրել
Վիբորգ—Հելսինկի խճուղին: Անտառում, ձյու-
նածածկ կածանի վրա մենք նկատեցինք մի ան-
շարժ մարմին: Մոտենալով տեսանք, որ գլուխն
անջատված է իրանից: Մեր խիզախ հետախույզ
ավագ, ընկեր Իվանովի ծանոթ դիմադժերը... իր
գաղանությամբ թշնամին գերազանցել է ամեն
ինչ: Ցնցված, մենք լուռ կանգնել էինք մարտիկի
դիմակի մոտ:

— Վրեժինդի՛ր լինել... Մահվան փոխա-
րեն մա՛Հ...

Մենք բարձրացրինք գլուխներս:

Մեզ մոտ կանգնած էր դիվիզիայի կոմի-

սարը: Բարձրահասակ, սպիտակ քողարկող խալաթով, նա բարձրացնելով ձեռքը, կրկնեց խիստ եղումը:

Այնուհետև նա հրամայեց.

— Եցնե՛լ տանկերի հրանետները:

Կրակի լավայի հեղեղ էր ժայթքում մեր հրանետ տանկերից: Գարշահոտ, սև ծովս էր բարձրանում թշնամու դիակներից: Ոչ մի բան չէր կարող փրկել սպիտակ ջիններին: Մենք գրավեցինք Նիսալախտին:

Ահա այդպես ընդմիշտ վեհ և ուժեղ էր մնացել դիվիզիայի մարդկանց հիշողության մեջ նրանց կոմիսարը, որը երդել էր սիրել իր ժողովրդին և տտել թշնամուն:

— Նա ջերմ սիրու ունի, — ասում էին կարմիրքանակայինները: — Նրա սիրուը հրանետի պես տաք է:

Նոր ուժգնությամբ հնչեց Գալուտյանի ձայնը Հայրենական պատերազմում:

Դիվիզիան շարժվում էր դեպի Սոլցի: Նա գնում էր արկերից քարուքանդեղած ճանապարհներով: Թշնամու օդային հարձակումներից այրվող գյուղերը ջահի նման լուսավորում էին ուղին:

Գալստյանն իջավ մեքենայից։ Նա հանեց
պիսարկը և այդպես բաց գլխով անցավ արյու-
նաքամ եղած գյուղի միջով, կարծէս հրաժեշտ
տալով զո՞ված ընկերոջը։

— Տեսէ՞ք, — ասում էր Գալստյանը կար-
միրքանակայիններին։ — Ահա սա գերմանացիններն
են արել։

Դիմիդիայի շտաբը Մեդվեդովն է։ Գալս-
տյանը գնում է գնդերը, գումարտակները, վաշ-
տերն ու դասակները, հավաքում է կոմունիստ-
ներին։ Նա ոչ միայն իր բարձր պաշտոնի շնոր-
հիվ իրավունք ունի կոմունիստներին սովորեց-
նելու, որ առջևում լինեն, համարձակ նայեն
մահվան աշքերին, մահից էլ ուժեղ լինեն, նա ի-
րավունք ունի մարդկանց անվեհերություն սովո-
րեցնել, որովհետեւ նա ինքն է արհամարհում
վտանգը, եթե գործը վերաբերում է Հայրենիքի
պաշտպանությանը։

Գալստյանն անողոք էր թշնամու հանդեպ։
Նրա ջերմ սիրտը պահանջում էր որ ամեն օր
դիմիդիան լուր ստանա հարյուրավոր սպան-
ված գերմանացինների մտսի։

— Որքա՞ն է, — Հարցնում էր Գալստյանը
Հրամանատարներին:

Եվ նրանք պետք է ճիշտ պատասխան տա-
յին, թե ո՞րքան գերմանացի էր ընկել մեր կրակից:

Երջանիկ և հուզված Գալստյանը գալիս էր
շտաբ: Նա ուներ իր անձնական գրանցումները՝
գերմանական Ճիշտադներին ներկայացվող Լենին-
գրադյան դիվիզիայի առելության հաշիվը: Սա-
կայն դրանք միայն անձնական գրանցումներ
չեին:

— Ես դրանք ցույց կտամ մեր թանկագին
ընկերոջը և ղեկավարին՝ Անդրեյ Ալեքսանդրովիչ
Ժդանովին: Այդ հաշիվը կուրախացնի Լենինգրա-
դի բոլշևիկների ղեկավարին:

Մի մարտից հետո Գալստյանը մեկնեց
բուժսանդումարտակ և իր մոտ կանչեց բժիշկ
Զառւսովին.

— Ձե՞զ մոտ է վիրավոր իարմիրքանակա-
յին Խարլամովը:

— Հիմա կիմանամ, ընկե՛ր կոմիսար:

Բժիշկն իմանում և զեկուցում է,

— Այո՛, այստեղ է, ընկե՛ր կոմիսար: Նրան
արգեն վիրահատել են:

— Ուրեմն սա բարի եղեք հանձնել նրան։
Մրա մեջ մի քիչ քաղցրավենիք կա, կինս է ու-
ղարկել։—Գալստյանը մի բոպէ լոեց։—Գիտեք,
ես տեսա, թե ինչպես կարմիրքանակալին Խար-
լամովը միայնակ մենամարտում էր գերմանա-
կան մի տանկի հետ և հաղթող դուրս եկավ։
Տանկը ամբողջ սրիկաների անձնակազմով այր-
վեց (և մի քիչ էլ լոելուց հետո).—Ահա՛ այս-
պիս պետք է սովորեցնենք բոլոր մարդկանց
կովել և կդառնանք գվարդիականներ։

Ինիամին Հովհաննեսի Գալստյանը լենին-
գրադի հավատարիմ պաշտպանն էր։ Արեավառ
Հայուստանի այդ զավակը բուռն կերպով սիրեց
մեր հյուսիսային մայրաքաղաքը։ Դիվիզիայում
նա անդադար կրկնում էր.

Հիշեցեք, որտեղ էլ լինի ձեր տունը, լե-
նինգրադին սպառնացող վտանգը սպառնալիք է
ձեր տանը։ Լենինգրադը մեր տունն է, լենին-
գրադը մեր ընտանիքն է, լենինգրադը մեր Հայ-
րենիքն է։

Գալստյանը աճեցրել է գվարդիական քաղ-
աշխատողների մի շարան։ Մեկ էլ խորը գիշե-
րին կլսես, թե ինչպես դիվիզիայի կոմմիսարը խո-

սում է քաղղեկի հետ: Յերեկով նա ներկա է եղել մարտիկների հետ քաղղեկի ունեցած զրույցին, իսկ այժմ իր դիտողություններն է անում:

— Դուք բոլորը ճիշտ էիք ասում, բայց ևս դեռևս գոհ չեմ: Խոսքերը ճիշտ են, բայց դրանք չեն թափանցում հոգու ներսը: Չէ՞ որ ձեր վաշտում կարմիրքանակալին Սավշենկոն նամակ է ստացել, որով հայտնում են, թե գերմանացիները նրա որդու ձեռքը կտրել են: Երեխալի լուսանկարը կա հոր մոտ: Եթե ես լինեի քաղղեկը՝ կվերցնեի այդ լուսանկարը, կշրջապատեի կարմիր երիզով և մարտից առաջ ցույց կտալի մարդկանց:—Ահա՝ նա՝ մեր որդին, որին խոշտանգել են գերմանական ավաղակները: Դուք երեխաներ ունեք, —հանկարծ հարցնում է նա քաղղեկին:

— Ո՛չ, ընկե՛ր կոմիսար:

— Ես երեքն ունեմ: Բայց նկատի ունեցեք, որ նրանք ոչ միայն ինձ, այլ ձեղ ևս կհարցնեն, —ինչպե՞ս ես դու կուլել, ինչպե՞ս ես դու, որպես կոմունիստ, մարդկանց մարտի տարել...

Գալստյանը լենինի շքանշանակիր 70-րդ դիվիզիայի կոմիսարն էր ֆիննական պատերազ-

մում և Հայրենական պատերազմի սկզբի դըժվարին ամիսներին։ Այն օրերին, երբ Լենինգրադի ռազմաճակատի զորքերը պատրաստվում էին գերմանացիներին ջախջախել մեծ քաղաքի պատերի տակ, Գալստյանը նշանակվեց բանակի Ռազմական Խորհրդի անդամ։

* * *

1942 թվի ամռանը Հարազատ Լենինգրադի պատերի տակ մարտական պոստում զոհվեց Բենիամին Հովհաննեսի Գալստյանը։

Նրան ճանաշում էին Լենինգրադի ռազմաճակատի շատ ռազմիկներ, և բոլորը, ովքեր նրան ճանաշում էին, սրտանց սիրում էին կրակոտ ու տոկուն այդ բոլշևիկին, որի անվեհեր սիրում միշտ այրվում էր Հայրենիքի անշեշ սիրով և թշնամու նկատմամբ տածած ատելությամբ։

ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետի 1942 թվի գեկտեմբերի 6-ի որոշմամբ Բենիամին Հովհաննեսի Գալստյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում։

ՍՈՒՋԵՎՈՒՄ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆՆ Է

I

Լենինգրադը շրջափակող թշնամու դիրքերը
ճեղքելու համար մղված մարտերի անմռանալի
օրերին էր:

«Եռշան» կոչված պուրակի հյուսիսային
ծայրում, խրամի մեջ, պառկած էին գումարտակի
ճրամանատար Բաննիկովը և նրա քաղաքական
գծով տեղակալ Հայկ Մելքոնյանը:

— Իրադրությունը ուարզվեց, — մտածելու
ասաց Բաննիկովը: — Անտառում Հրետանին շի
բացաղատվի: Իսկ գերմանացիները ավանի շուր-
ջը գլուխներ և կատոնիրներ ունեն: Գլխի ըն-
կալու:

Որոշվեց գերմանական պաշտպանությունը
ճեղքել ականանեաների և հակատանկային հրա-
ցանների կրակով: Որոշվեց կրակացին հզոր
հարվածով ավանում թարսված գերմանացիներին
շշմեցնել, կտոր-կտոր անել և գետնի մեջ թա-
ղել:

Խոսյուտ ծայնով ծղբառում էին հեռախոսները: Սառերի արտնքով արագ դես ու դեն էին վագում կասկավորները: Վաշտերից մեկն առաջացավ դեպի աջ թևը և պառկեց փոսում: Գումարտակը պատրաստ էր մարտի: Եվ շուտով մարտը սկսվեց:

Հեքիաթային թոշունի պես երկինք սուրաց հրթիռը: Եվ հանկարծ տագնապալից այն լուսիանը, որ լինում է միայն պատերազմում, փոխարինեց Յրածության զբնդայող և ոռնացող որոտը:

Կրակե սուրբ շլացուցիչ կերպով վայլատակեց և խրվեց թշնամու ամրությունների խորքը: Ականածիզները ավանի վրա թափեցին հազար երեք հարյուր ական, և բոսրագույն բոցը բարձրացավ աների վրա. Ֆրիցները դես ու դեն ընկան, ոկուցին վաղվզել և մահացու խոցված՝ ընկան ձյան վրա:

Եվ թշնամաւ կրակային դիմադրությունը, ալիք-ալիք թուլանում, դադարում, խաղաղվում էր:

— Դե՛մ, զրո՞շելու պահը մոտ է, — ասաց կակապիտան Բաննիկովը:

Եվ ահա Հենց այստեղ լսվեց մի այնպիսի
խացուցիչ որոտ, որ թվում էր թե բուն Հողը
անտանելի ցավից ոռնաց: Կապիտանը Հենվեց
առվի եզրին և ձեռքով ամուր սեղմեց արյունա-
հոս վերքը:

— Է՞ս, մի՞ թե իմ բաժինս կովեցի, — վշտա-
լից Հառաշեց նա: — Սակայն ճարս ինչ ընկե՛ր
Մելքոնյան, գումարտակի հրամանատարությունը
քեզ վրա վերցրու:

Մելքոնյանը գրոհի ազդանշան տվեց և
գրոհային խմբերը հարձակվեցին գերմանական
դզօտների վրա: Նրա հետ կողք-կողքի ընթանում
էին գրահահարները: Ֆաշիստական ականա-
նետները խփում էին անտառային պահակատան
ետեից: Երեք կրակոց: Եվ պահակատունը բո-
ցավառվեց: Գերմանացիները փախան դեպի
ավանը, բայց Մելքոնյանը հրամայեց մարտիկ-
ներին նրանց ճանապարհը կարել: Երեսունութ
ֆրից գերի վերցվեցին:

Արդեն շրջապատվել և ոչնչացվել էին թշնա-
մու մի քանի դզօտ: Արդեն բացատով սողում
էին մեր հրածիզները: Նույն ժամին Մելքոնյա-
նին հաղողողեցին, որ աշից գործող հարևանները

գրավեցին գերմանացիների թևային հենակետը:
Իսկական ժամանակն էր, որ նա էլ թողնի ան-
տառի ծայրում գտնվող նեղլիկ խրամատը և իր
գումարտակը գրոհի տանի:

— Առա՞ջ, կտրիձնե՞ր: Կռվեցե՞ք մինչև վեր-
ջին ֆրիցը,—աղաղակեց Մելքոնյանը:

— Հա՛յկ, ասաց նրան թաննիկովը,—ոտ-
ներս գեռքայլում են, աշքերս դեռ թշնամուն
տեսնում են: Վայել չէ ինձ լաղարեթում պառ-
կելը:

— Դու վիրավորված ես, բժշկվի՞ր և մի՛
վշտանա...

— Չէ՞ որ կենինգրադը ևս ամբողջովին ծածկ-
ված էր վերքերով,—ասաց նա, —բայց դիմացա՛վ:
Մելքոնյանի համար դժվար էր բարեկամին
նեղացնել: Բայց նա հաստատուն ձայնով ասաց.

— Չեր հրամանով գումարտակի հրամանա-
տարը ես եմ: Առաջադրանքը կկատարվի: Գնա-
ցե՞ք գոսպիտալ: Կբուժվեք և ապա կսկսեք կըո-
վել:

Նա սրտագին խոսակցության ժամանակ
չուներ:

— Գրո՞՞՝,— Հրամայից նա:

Ծուտով «ուռան» խլացրեց դնդացրալին Հարձատլունը. Հրածիգներն առաջ սլաքան և Հարձակվեցին գերմանացիների վրա:

Գումարտակը սրբնթաց գրոհով անտառում դրավից գերմանական պաշտպանության բնակիծը և հանավ ավանի ծայրամասին:

Իսկ այսդ լեյտենանտ իվանովը պառկած էր գերմանական խրամատներից քսանհինդ ժետր տարածության վրա և արցունարամ էր լինում: Իսկ նրա կողքին՝ վիրավոր լեյտենանտ Մոխոնենկոն էր: Սանիտարները երկը անզամ փորձեցին սողալով ձուռենալ նրանց, բայց գրնդացրույին տեղատարափ կրակը թույլ չտվեց:

— Տերենտի՛, — ասաց Մելքոնյանը ավագ ուրժանատին, — Հիշո՞ւմ ես Սուվորովի խոսքերը:

— Ինքդ զոհվիր, բայց ընկերոջդ փրկիր, — պատասխանեց հու:

— Դնա՛, — Հրամայից Մելքոնյանը:

Եվ Տերենտեր շրացավ դիշերալին խավարում...

Մելքոնյանը գիտեր, որ ավանը գերմանական դիմապրության կենտրոնական հանդուցն

է և լավ ամբացված է: Գերիները ցուցմունք էին տվել, որ այնտեղ 20 դզոտ և կապոնիր կա և առնվազն 30 հրանոթ: Բայց ո՞րտեղ են գերմանացիների կրակակետերը: Մելքոնյանն այդ չգիտեր, բայց ճշտիվ պետք է իմացած լիներ դեռ գիշերը, մինչև մարտի սկսվելը: Նա իրավունք շուներ լա-բախտի, կուրորեն գործելու:

Մելքոնյանը որոշեց կրակային հետախուզություն կատարել: Նրա հրամանով զրահաշատները դուրս սողացին մեր մարտական պահպանության գծից և առանց նշանոցի կրակ բացին: Գերմանացիները նկատելով կրակոցների վառ հետքերը՝ ոշինչ շնասկացան և անկարգ հրաձգություն սկսեցին՝ դզուներից՝ լուսածիր գնդակներով: Այդ ժամանակ դիտորդները «որոշում էին» թշնամու կրակակետերը:

Լուսաբացին Մելքոնյանին բերին ավանի կրակային պաշտպանության սխեման: Մելքոնյանի համար բերկրալից լուր էր Տերենտեի գեկուցագիրն, որ հրամանատարներ իվանով և Մոխենկոն արդեն փրկված են: Ապա նա դանդահարեց փոխպնդապետին և պատմեց առաջիկա

մարտի պլանը, ուշադրությամբ լսեց նրա ցու-
ցումներն ու խորհուրդները:

Երկինքն արևելքում. շառագունել էր:
Մարտիկները քնած էին հապճել փորված
տնակներում, քոլիկներում և վրաններում:
Քնած չէին միայն ժամապահները, դիտորդնե-
րը, խոհարարները, հեռախոսավարները: Իսկ
Մելքոնյանը նստած էր շշի մեջ խրված մոմի
կողքին և նայում էր քարտեզին: Նա շատ բան
ուներ խորհելու, որպեսզի արևի առաջին ճառա-
պայթներին հանգիստ և վստահ դիմավորեր:

II

Առավոտյան մարտը սկսեցին ականաձիգ-
ները: Նրանք ավանի վրա թափեցին հազար
հինգ հարյուր ական: Շիկացան ականանետնե-
րի փողերը, մարտիկները բռերով ձյուն էին լըց-
նում նրանց վրա: Ականանետային մարտկոցի
կրակային հարվածը տառացիորեն գետնին հա-
վասարեցրեց գերմանական խրամատները և
հրետանային դիրքերը: Նորից խիզախորեն առաջ
էին գնում հրածիգները: Հանկարծ գերմանական
ականանետները կրակի թանձր ալիքով կանգնեց-

բին Ռակովի վաշտը: «Մանկրի'ք», — գոռաց
Հեռախոսով Մելքոնյանը:

Մարտի բոցը բորբոքվում էր: Վաշտը կառ-
շեց ավանի ծայրամասին և սկսեց հիտերա-
կաններին դուրս մղել տներից: Մելքոնյանը
հմտորեն փոխադրում էր ականանետների հա-
մազարկերը մարտի ամենավտանգավոր հատ-
վածների վրա:

Նրա սիրտը լցվեց երջանկությամբ, երբ նա
լսեց բուռն, հրճվալից «ուռան»: Գումարտակը
ներխուժեց գյուղը: Գերմանացիները դուրս էին
վաղում խրամատներից ու նկուղներից: Նրանց
խոցում էին սվիններով, շշմեցնում էին նոնակ-
ներով, խփում էին դեմ առ դեմ: Վերջապես
վրա հասավ լոռությունը: Հաղթանակի լոռությունը
իջավ ավանի ծխացող փլատակների վրա:

Ամեն կողմից Մելքոնյանի մոտ բերում էին
գերիներ: Պատառուաված և կեղտու ֆրիցները
գողի պես շուրջը նայելով՝ առնետների նման
սողում էին ճանապարհով: Երեք հարյուր գերի:
Գրավված է երեսուն հրանոթ և ուազմամթեր-
քով ու պարենով լի պահեստներ:

Բայց ձախ ավանում դեռ գերմանացիներ

կային և Մելքոնյանը հասկանում էր, որ նրանց
շպետք է թույլ տալ, որ ուշքի գան, ուղերվներ
մոտեցնեն: Նա ձայն տվեց մարտիկներին և
վազեց ճանապարհով: Այստեղ արդեն հույր
ականանետների, զրահահատների, գնդացիրների
վրա չէր: Այստեղ մարտադաշտում արդեն գոր-
ծում էր ոռւսական քաջությունը, մարտական
համարձակությունը:

Մելքոնյանը վազում էր դեպի ավանը. նա
այնքան մարտիկներ շուներ, որքան խիզախու-
թյուն: Ֆրիցները շդիմացան, շշմած վազեցին
դեպի անտառը, բայց մերոնք հասան նրանց և
ոչնչացրին: Շատ ֆաշիստների սև արյունը լեր-
դացավ Մելքոնյանի հրացանի սվինի վրա:

Գերմանացիների հաշիվն արդեն վերջացած
է: Մելքոնյանը և նրա կապավոր Անիսիմովը
դանդաղ գնում են դեպի անտառը: Նրանք հան-
դիպեցին սպիտակ խալաթներով դահուկավորնե-
րի: Մերո՞նք են: Եվ մի բոպէ անց Մելքոնյանը
երջանիկ ծիծաղով գրկում էր վոլխովցի մայոր
Մելնիկովին: Անիսիմովն ամուր սեղմեց Վոլխո-
վյան ուղմաճակատի անծանոթ մարտիկի ձեռքը:

Լենինի քաղաքի շուրջը եղած գերմանական շրջափակման օղակը ճեղքված էր: Մինչավինի սառած ճահիճներում իրար հանդիպեցին լենինգրադի և վոլխովցի մարտիկները: Մելքոնյանն առաջիններից մեկն էր, որ մտավ լենինգրադը «Մեծ Հողին» միացնող միջանցքը:

Հենց նույն օրը մենք խոսում էինք Անիսիմովի հետ, այն մարտիկի հետ, որը Մելքոնյանին նայում էր սիրահարված աշքերով.

— Անիսիմով, վաղո՞ւց է Մելքոնյանը բանակում: Փորձված սպա է երևում:

— Հյո՞ւ, — ծոր տալով շվացրեց Անիսիմովը: Նա Հայաստանում շրջկոմի քարտուղար է եղել: Նա բոլշևիկ է: Պատերազմը սկսվեց թե չէ՝ նա հրացանը ձեռքը վերցրեց...

III

Մելքոնյանը կանգնած էր բլուրի վրա: Մարտական եռուզենի առատ քրտինքը պատել էր նրա թուխ դեմքը: Նա կանգնած էր այն հսկայական, հզոր, ամսից-ամիս անդադար ստեղծվող գերմանական ամբարտակի վրա, որն օղակել

էր կենինգրադը։ Այստեղ սովետական «մեծ» հո-
ղը միացել էր ազատագրված քաղաքին։

— Զեկուցեցե՛ք փոխգնդապետին, — ասաց
Մելքոնյանը, — որ առաջին գումարտակը կա-
տարել է նրա հրամանը։

Այսպես սկսեց իր հարձակման ուղին Հայկ
Մելքոնյանը։ Այն ժամանակվանից ի վեր նա
շատ ուղիներ է անցել։ Նա կենինգրադի մոտ
գերմանացիների ջախջախման և էստոնիան գեր-
մանական զավթիչներից ազատագրող հերոսնե-
րից մեկն է։

...Ծունկի բերված հիտլերյան Գերմանիայի
հողում նա ավարտեց իր արշավը։ Հայկ Մել-
քոնյանը միշտ և ամենուրեք առջևումն է գրտ-
նըվում։

Մայոր Ա. ՄԻԽԱՅԼՈՎ,
Կապիտան Ա. ՎԱՅՆԵՎՍԿԻ

ՍԵՐԳՈ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԲՆԱԳԻԾԸ

Մեծ մարտերը ամեն մի մարտիկ շահում է
իր բնագծում, իր ուղղությամբ։ Մենք կպատ-
մենք, թե ինչպես է մարտնչել լենինգրադի հա-
մար խիզախ կարմիրբանակային Սերգո Ղազա-
րյանը լենինգրադի ճանապարհը գերմանացիների
տօշի փակող Պուլկովյան սարի հարավային լան-
ջում տեղի ունեցած մարտական գոտեմարտերից
մեկում։

* * *

Երկրորդ դասակն առաջ էր շարժվում։ Վի-
րավոր դասակի հրամանատարին փոխարինած
կարմիրբանակային Սերգո Ղազարյանը բերկրա-
լի հուզմունքով դիտում էր, թե ինչպես ճշշ-
տորեն են կատարվում իր հրամանները, թե ինչ-
պես մարտիկները կրակով իրար լավ քողարկե-
լով՝ վաղեվաղ մի բլրակից մյուսն են անցնում և
մոտենում գերմանական խրամատներին։

Առաջին և երրորդ դասակները, որոնք թևե-

րից հարձակվում էին երկրորդ դասակի: Հիտելից, ետ մնացին: Գերմանացիներին հաջողվեց Ղաղարյանի դասակը վերցնել կրակե օղակի մեջ: Յաշխստները կրակում էին ականանետներից, դնդացիրներից, ավտոմատներից և հրացաններից:

— Խրամատավորվե՛լ, — հրամայեց Ղաղարյանը:

Գերմանացիները չէին կարող նշանոցային կրակ վարել, բայց և այնպես կարողացան շարքից դուրս բերել մի քանի մարտիկ:

— Ի՞նչ անել, — մտածում էր Ղաղարյանը: Մտքերն արագ հաջորդում էին իրար: Եվ նա որոշեց համարձակորեն կենաց և մահու կամիրնվել բազմաթիվ թշնամու հետ:

— Ավելի՝ լավ քողարկվել: Կենտ-կենտ կրակոցներով անվրեպ խփել ֆաշխաներին, — անցավ շղթայով Ղաղարյանի հրամանը:

Գերմանացիները շշմեցին, ամեն կողմից կրակային օղակն ընկած սովետական մարտիկների խումբը ոչ թե հանձնվում, այլ անհավասար մարտի էր բռնվում:

Խրամատից դուրս նայեց դերմանական մի

ավտոմատավոր: Դադարյանն ավտոմատով նշան
բռնեց նրան և կրակեց: Գերմանացին ընկալվէ:
Կապավոր նեմինը սպանեց մի երկրորդ ֆաշիս-
տի: Հիտլերականներն աղաղակով դուրս թռան
խրամատներից և ավտոմատային կրակ թափե-
լով՝ նետվեցին խիզախների վրա, նրանց գերի
վերցնելու կամ կոտորելու մտադրությամբ: Գեր-
մանացիների վրա սլացան նոնակներ, ուժեղա-
ցավ մեր ավտոմատային կրակը: Գերմանացինե-
րը նահանջեցին: Նրանց համար անհասկանալի
էր, թե ինչու կարծես մահվան գատապարտված
սովետական մարտիկները չեն ցանկանում անձ-
նատուր լինել, այլ դիմադրում են: Ֆաշիստներն
այդ հատվածի վրա ականանետային կրակի տա-
րափ թափեցին, ապա նորից փորձեցին գրոհել
խիզախների բնագծի վրա և դարձյալ նրանց
գլխին ուժեղ կրակ տեղաց:

— Ռո՛ւս, հանձնվի՛ր, — սկսեցին գոռալ
ֆաշիստները՝ գլուխները շբարձրացնելով հո-
ղաթմբից:

— Լոեցի՛ք, շշարժվե՛ք, — հրամայեց Դա-
դարյանը իր մարտիկներին, իսկ ինքը զգալու
հետեւմ էր թշնամու խրամատներին:

Ճակատից գերմանացիները դրել էին վեց
ավտոմատավոր, իսկ թևերից՝ երկու սնայպեր:

— Պառկե՛լ և շրաբքանա՛լ, նորից հրաման
տվեց Ղազարյանը: — Կովե՛լ մինչև վերջին փամ-
փուշտը: Նոնակները թողնե՛լ պաշարի համար:

Մարտը ոչ մի րոպե չէր դադարում: Գեր-
մանական ավտոմատավորները և սնայպերները
փոխում էին դիրքերը՝ աշխատելով կոտրել խի-
զախ ռազմիկների դիմադրությունը:

Այսպես անցավ մեկ օր: Վրա հասավ լու-
սավոր գիշերը: Օղակման մեջ ընկած Ղազարյա-
նի մարտիկներին օգնություն հասցնել շկարողա-
ցան:

Կես գիշերին Ղազարյանը հրամայեց կապա-
վոր Նեմինին՝ հասնել մերոնց մոտ և օգնություն
բերել:

Նեմինը դեռ երեք մետր էր սողացել, երբ
նորից սկսեցին ոռնալ գերմանական ականները.
Դրանք շատ մոտ էին պայթում: Վիրավորվեց
Նեմինը, վիրավորվեց զոկի հրամանատար Կուր-
մամբեկովը, ուսից վիրավորվեց նաև ինքը՝ Ղա-
զարյանը: Ուշադրություն շդարձնելով իր վեր-
քին՝ Ղազարյանը կապեց Նեմինի գլուխը: Ծանր

միրավորված Կուրմամբեկովը կամաց տնքում էր: Գերմանացիները վճռեցին, որ այժմ սովհատական մարտիկներն արդին չեն դիմադրի, և նորից դուրս եկան խրամատից, սողացին գեպի տնքացող Կուրմամբեկովը, որը դզուտից քիչ հեռու էր ընկած:

— Ո՞չ իժե՞ր: Ես նրան ձեղ շեմ տա,— ՀՀնջաց Ղազարյանը:

Նա վերցրեց ավտոմատը, բայց տեսավ, որ ականի բեկորով այն վնասվել է: Այդ ժամանակ Ղազարյանը մի փոքր բարձրացավ և գերմանացիների վրա նետեց երկու նբնակ: Մի հիտերական սպանվեց, երկուսը միրավորվեցին, մնացածները փախան:

Այդ միջոցին Ղազարյանին նշան բռնեց գերմանական մի սնայպեր: Գնդակը դիպավ պայուսակին: Սերգոն ավելի ևս խորը թաղվեց հողի մեջ: Գնդակները գնալով ավելի հաճախ էին սուլում նրա գլխի վերև: Չորս գնդակ դիպավ պայուսակին, ծակեց կոտելովը, շոր սպիրտով լի տուփը, բայց Ղազարյանին շղիպավ: Գերմանական սնայպերը հավանաբար կարծեց,

թե սովետական մարտիկն արդեն մեռած է; Նա
մի քանի զնդակ ևս կրակեց և լոեց:

Գիշերը Նեմինը ուշագնաց եղավ, սկսեց զա-
ռանցել և ցնցվել: Գերմանական ավտոմատա-
վորները նրան նկատեցին: Հերթազարկերից մհ-
կը դիպավ Նեմինին: Նա առանց ուշքի գալու-
մեռավ: Ղազարյանը մոտեցավ նրան, համբու-
րեց ընկերոջ շորացած շրթունքները և շշնչաց.

— Մնա՞ս բարե, ընկե՛ր: Իսկ մենք դեռ կը-
կովենք: Իմ մարտիկներից և ո՛չ մեկին ոչ մե-
ռած և ոչ էլ կենդանի ձեզ չե՞մ տա, ֆրիցնե՛ր:
Բնագի՛ծն էլ չեմ տա:

Երկնքում ամպեր երկացին, ապա կուտակ-
վելով ծածկեցին լուսնի երեսը: Ղազարյանին
սողալով մոտեցավ վաշտի հրամանատարի կա-
պավորը:

— Իսկ մենք արդեն քեզ մեռած եինք հա-
մարում, — ասաց կապավորը:

— Թո՛ղ մարդիկ ուղարկեն: Գրաված բնա-
դից չեմ հեռանա: Գերմանացիներին կարելի է
խրամատներից դուրս մղել, — պատասխանեց
Ղազարյանը:

Կես ժամ հետո օժանդակ ուժեր հասան և
ընադիմ հաստատապես ամրացվեց:

* * *

Ղազարյանը հինգ անգամ վիրավորվեց:

— Զէ՞ որ իմ սիրտն ամուր է, — ասում է
նա և ուրախ ժպտում: — Ետ հայկական գրանի-
տից է: Մեզ մոտ գրանիտե մեծ սարե՛ր կան:

Նրա կրծքի վրա փալլում են Կարմիր Դրո-
շի շքանշանը և «Ախղախության համար» մեղալը:

Կայուն զինվորների մասին իր ժամանակին
դեռ Պետրոս Առաջինն ասել է. «Քաջ սիրտը և
սարքին զենքը պետության լավագույն պաշտպա-
նությունն է»: Լենինի մեծ քաղաքի համար մըդ-
մած մարտերում Մերգո Ղազարյանը իրեն ցույց
տվեց որպես քաջ զինվոր:

Թոյեր Ա. ՌԵՎԻՄԵԽՉԱԲՇ
ԿՐՏՍՒՅՑ ԼԵՂՏԵԲԱՅԻ Ն. ՑԱՀԱՌԱՋԱՅԻ

ԶՈՐՍ ՀԱՆԴԻԹՈՒՄ

1. Գագիկ Եսայանի նկարները

Վիրավոր մարտիկի մահճակալի մոտ, փոքր
սեղանի վրա դրված է մի բաց բլոկնոտ: Իմ ու-
շագրությունը գրավում է բլոկնոտի մի մատի-
տանկարը: Էռնային մի պեյզաժ, առաջին պլա-
նում հանգստանում է արա հագած մի ծերունի
հովիվ՝ թաղիքե կլոր գդակը գլխին: Նրա ոտքե-
րի մոտ պառկած են երկու հսկայական գայլ-
իսեղդ շուն, մի փոքր ավելի վերև արածում է
ոչխարների հոտը: Մարտիկից թույլտվություն
եմ խնդրում թերթել բլոկնոտը: Հաջորդ է շում
նկարված է նատյուրմորտ, սալոր, դեղձ և խա-
ղող, Երբորդ է շում՝ հայկական աղբային տարա-
գով մի կին՝ ուսին գրած կժով շուր է տանում:

— Դուք ի՞նչ է՝ Հայաստանում եղե՞լ եք,—
Հարցնում եմ գորշ աշքերով ուսւ երիտասար-
դին:

— Այդիմ տեսրակը չէ, այդ բոլորը «Արծվիկի» խաղերն են:

«Արծվիկը» քնած է Հարևան մահճակալում՝ վերմակը գլխին քաշած: Ես գնում եմ Հարևան պալատը կարդալու և երբ մի ժամ հետո վերադառնում եմ՝ տեսնում եմ, որ նա զրուցում է Հարևանի հետ: Բավական է մի հայացք զցել «Արծվիկի» բնորոշ թուխ դեմքին, որ հավատաս, թե նա է մատիտանկարների հեղինակը: Գաղիկ Եսայանը քսան տարեկան է, երեանցի: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա աշխատել է որպես մոնտյոր տրամվայի պարկում: Բանակ կանչվելով՝ Գաղիկ Եսայանը շուտով ոնկավ Կարելական պարանոցը:

— Սկզբում իմ բանը շատ էր գժվարանում ուռւսերենի պատճառով: Ես լավ էի Հասկանում, բայց ինձ վատ էին Հասկանում: Սակայն ուղմաճակատում, ինչպես դպրոցում, մարդ շատ բան է սովորում: Առաջին օրերն ինձ օգնում էր մեր դասակում ծառայող մի ուզբեկ: Ես նրա հետ խոսում էի աղբբեջաներեն, իսկ նա թարգմանում էր սովորեն:

— Ո՞վ է ձեզ «Արծվիկ» անվանել:

Նա ծիծաղում է:

— Իմ Հրամանատարը՝ Գիտեք, Ֆինլանդիայում կան այնպիսի տեղեր, ինչպիս մեզ մոտ, բարձր բլուրներ՝ ջրվեժներով։ Մուս ընկերները դրանց սար են ասում, իսկ ինձ համար դրանք ի՞նչարկե սար չեն։ Երբ մոտենում ես այդպիսի սարի՝ Հրամանատարը որոշում է հետախուզության գողարկել։ Ես ոտից թեթև եմ, ինձ համար սար բարձրանալը դատարկ բան է. և ահա ես խնդրում եմ ինձ ուղարկել հետախուզության։ Մի երկու անգամ նշանակված ժամկետից շուտ վերադարձա և ահա Հրամանատարն ասում է. «Այս ի՞նչ է, դու գնո՞ւմ եիր, թե՞ թոշում։ Այդ դու, արծվիկ»։

Այդ անունն այդպիս էլ կպավ ինձ։ Մեր Եփրեյտոր Պոնոմարենկոն հետո ինձ ասում էր՝ «Դե՛, ախալե՛ր ջան, «Արծվիկ», հիմա պինդ պահիր անունդ։ Այդ քո Հրամանն է, քանի որ Հրամանատարն է տվել։ Դու էլ պետք է լավ կռվես, արծվի՛ նման»։

Վիբորգից ոչ հեռու Գագիկ եսայանը վիրավորվեց։ Եսայանի գասակը հաղթահարում էր մի անտառապատ բլուր, որի կատարին դօտ կար-

Այդանեղից ֆինները անընդհատ կրակ էին տեղում: Մեր մարտիկները համառորեն վեր էին մագլցում՝ կառչելով ծառաբներից ու թփերից: Ֆինները շարունակում էին կրակել: Այն ժամանակ հրամանատարը նսայանին մի այլ մարտիկի հետ ուղարկեց դօտը շրջանցելու:

Դօտը շրջանցելով՝ մարտիկները նրա վրա նոնակներ նետեցին: Ֆիններն ամրությունից դուրս թափվեցին և համարյա բոլորը ոչնչացվեցին:

— Ահա այստեղ էլ ծառի վրայից անսպասելի կերպով սկսեց ճարճատել մի ավտոմատ,— պատմում է Գագիկը: — Ես ոտքից վիրավորվեցի: Մեր հրամանատարը ծառից ֆինն ավտոմատավորին ցած գլորեց: Այժմ իմ զորամասը վաղուց արդեն գտնվում է Վիբորգից այն կողմ, իսկ ես պառկել եմ և շարունակ մտածում կմ, թե ուսո ինձ առաջվա նման ծառայելո՞ւ է թե ոչ:

— Զեզ կարող են ծառայել նաև ձեր ձեռքերը՝ եթե չկարողանաք շարքում մնալ, — տուժեմ ես, ցույց տալով նկարները:

Գագիկ ետայանը շփոթված ժպտում է:

— Նայեցի՞ք: Այդ ես ցանկացել եմ ընկեր-

ներիս ցույց տալ, թե ինչպիսի տեղեր կան մեղանում, ինչ պառւղներ, ինչպես են մեր կանայք հագնվում: Իսկ Երևան՝ քրոջս ուղարկված նամակում նկարում եմ Նեալի վրայից անցնող կամուրջը, Սուրբ Իսահակի տաճարը և այն տները, պատուհանից տեսնո՞ւմ եք: Թող իմանա, թե ի՞նչ հրաշալի քաղաք ենք մենք պաշտպանում: Իսկ եթե կարողանալի լրջորեն զբաղվել նկարչությամբ՝ ապա կնկարեի մեր մարդկանց: Այ, թեկուզ մեր հրամանատարին: Մարտում նրա ամբողջ երեսը լույս է արձակում, և աշքրում այնպիսի ուժ կա, որ մարտիկը պատրաստ է նրա ետևից անհատակ անդունդը նետվել: Այ, մարդ այդպիսի դեմք պիտի նկարի: Կամ մեր մարտիկների դեմքերը: Ամեն մեկն իր բնուրոշ գիծն ունի: Իսկ մարտում նրանք բոլորն էլ մի կրակով են վառվում...

— Այդ նրանից է, որ գործն ընդհանուր է,— միջամտում է Հարեան մահճակալին պառկած դորշ աշքերով երիտասարդը, — մտքերն ընդհանուր են, ուսւ լինի թե ուզբեկ, Հայ թե բելուս, ամենքն էլ մի բան են ցանկանում՝ ոչընշացնել թշնամուն:

— Այդ ճիշտ է, — Համաձայնվում է Գագիկ
Եսայանը: — Իսկ գործը եթե նկարելուն հասնի՝
ես բոլորին էլ կնկարեի. Նրանք բոլորն էլ գեղե-
ցիկ են:

2. Իմ հայրենակիցը

Ես պատմվածք էի կարդում վիրավոր մար-
տիկների համար մի մեծ սենյակում, որի պա-
տուհանները նայում էին Նեայի վրա: Ընթերցու-
մը վերջացնելով՝ ետ նայեցի: Մենյակի անկյու-
նում մահճակալի վրա պառկած է մի թխաղեմ
պատանի: Ո՞րտեղ էի տեսել այդ երկարավուն,
կարծիս թե ածուխով նկարած հոնքերը և ման-
կական խորամանկ աշքերը: Մահճակալին եմ
մոտեցնում ազատ աթոռը, նստում եմ և առանց
երկար մտածելու հարցնում եմ հայերեն.

— Ո՞րտեղացի եք զուք:

— Վաղարշապատից, — բերկրանքով ժըպ-
տում է նա: — Մեղ ասացին, որ հյուր կգա,
բայց ես չեի սպասում...

— Որ կգա հայրենակցու՞իդ, — խոսքը վեր-
ցացնում եմ ես:

Միսիթար Հակոբյանը քսան տարեկան է:
Երբ նա պատմում է իր մանկության մասին,
ինձ թվում է, որ դա իմ եղբայրների մանկու-
թյունն է: Այդ մանկությունն անցել է էջմիած-
նի ճեմարանի նույն ընդարձակ բակում, վանքի
լճի ափին, որտեղ լողալ էին սովորում մեր քա-
զարի բոլոր տղաները: Ճիշտ նրանց նման՝ Միսի-
թարը ճիռվ գնում էր իրենց խաղողի այգին,
ճիշտ նույնպես ամառվա գիշերներին քնում էր
Շին տան հողե կտուրին, որի քիվի տակ կալին
բազմաթիվ ծիծեննակի բներ: Դպրոցն ավարտե-
լուց հետո Միսիթար Հակոբյանը կանչվել էր բա-
նակ, սովորել էր հրետանային ուսումնարանում
և ապա ծառայել Գորիի պահեստային գնդում:

— Իսկ Գորոց ընկա ուղիղ Լենինգրադ, —
պատմում է Միսիթարը: —Կյանքումս այնքան
սառուց չէի տեսել, որքան այս մի ամսում տե-
սա Կրոնշտադտ և Օրանիենբաում տանող ճանա-
պահին: Իսկ ձյանը հաշիվ չկա արդեն... «Որ
կողմը նաևս՝ «Արարատն» է, —ասում է իմ ըն-
կեր Հայկ Հարությունյանը:

— Զեր գնդում հայեր շա՞տ կալին:

— Բավականին: Մենք եկանք պաշտպանե-

լու կենինգրադը: Նրանք բոլորն այժմ էստո-
նիայումն են: Գերմանացուն շատ հեռու քշե-
ցին: Միայն իմ բախտը լրանեց: Մտա ես էս-
տոնիա, մի քանի գյուղ անցա և մեկ էլ նարվա
դիտն անցնելիս վիրավորվեցի ձեռքից: Այնքան
ցավ չէի զգում, որքան վիրավորանք: Գնում էինք
ուսուցիչի վրայով, ամեն բան լավ էր, զնդա-
ցիրն իմ ձեռքումն էր. Հենց նոր էի երկրորդ
ոկավառակը դրել՝ և հարկադրված եղա ետ մը-
նալ: Որքան խնդրեցի, որ գոսպիտալ շուղարկին,
շօդնեց: Ա'յ, հիմա կորցրի իմ Հայկին: Զէ՞ որ
մենք միասին ենք վերջացրել Վաղարշապատի
դպրոցը և սովորել Հրետանալին ուսումնարա-
նում: Դեռևս հիշում եմ, որ երբ մորս հրաժեշտ էի
տալիս, նա ինձ ասաց. «Ընկերոց հետ մարտի
զնալը, որդի՛ս, հավառար է հարսանիք զնալուն:
Լա՛վ ընկեր եղիր, որ քեզ էլ սիրեն և հեշտ լինի
կուլելը...»: Վաշտում շատ համերաշխ էինք ապ-
րում, իսկ Հայկն ինձ համար հարազատ եղբոր
սկես էր: Վոլոսովից ոչ հեռու այսպիսի մի դեպք
պատճեցից: Մենք բացատ դուրս եկանք, տեսանք
ձյան մեջ մի շարդված տանկ է ցցված: Հայկի
հետ մոտեցանք տանկին նայելու, բայց տանկից

դուրս թռան վեցը գերմանացի և սկսեցին կրակել... Է՛՛, երկուսին Հայկը զցեց, երկուսին ևս, իսկ մնացած զույգին հավասար կիսեցինք և բերինք հրամանատարի մոտ: Իսկ նա ծիծաղելով տաց. «Զեր ամեն ինչը հավասար է, եղբոր պես»: Ափսո՞ս, որ դուք Հայկին չեք ճանաշում: Նրա աշքը դիպուկ է, իսկ սիրտը ջերմ: Շարունակ վազում էր հրամանատարի մոտ, խնդրում էր սնայպերական դարան ուղարկել: Ուրախ երիտասարդ էր, այդպիսին չես գտնի: Ծափ տուր և արդեն պարում է: Միևնույն է, ես նրան կդրունեմ: Թող միայն իմ գիպսը հանեն և հետ ուղարկեն զորամաս:

— Իսկ դուք ինչ կուղենայիք անել պատերազմը վերջանալուց հետո,—հարցնում եմ ես:

— Սովորելու եմ: Բայց ա՛յ, առաջ մտածում էի գրականությամբ պարապել, իսկ այժմ արդեն ես չեմ ընտրելու մասնագիտությունս: Ինչ որ ավելի պետք լինի: Կարող է քիմիկոս դառնամ, գուցե և ճարտարապետ: Դուք վաղո՞ւց չեք եղել Վաղարշապատում: Այնտեղ շատ փոփոխություններ է կատարվել: Նոր պարկ են տնկել, շատ ծաղիկներ են տնկել, բոլոր հին

նստարանները փոխարինել են նորերով: Իսկ որքան շատ նոր տնե՞ր կան: Եվ բոլորը քարե, ոչ այնքան մեծ իհարկե, ինչպես Լենինգրադում: Այ, թե որ շուտ լավանամ և քաղաքը մի լավ տեսնեմ: Թե չէ սանիտարական փակ մեքենայից շատ բան չես տեսնի: Իսկ ես, գիտեք, լենինգրադը սիրեցի դեռ կարգին շտեսած,— ասաց նա կարծատե լուսթյունից ճետո:— Եվ ոչ միայն նրա համար, որ նա անշուշտ շատ գեղեցիկ է, այլ և քաջ է զինվորի պես. ահա թե ես ինչպես եմ մտածում: Իսկ զինվորը զինվորի բարեկամն է...

Հակոբյանը վաղուց մայրենի լեզվով շեր խոսել և երեխ շատ էր ուզում իր մտքերը հաղորդել: Հենց այդ պատճառով էլ նա անսպասելի կերպով փոխեց խոսակցության թեման:

— Մի անգամ ես նստած էի մի գյուղում, էստոնական մի տան մեջ: Տանտիրուհին գործ էր անում, վառարան վառում, բան էր եփում: Ասաց, թե իր տղան պարտիզան է: Խարայաշ մազերով, թուխ աշքերով մի կին էր: Վառարանն էլ նման չէր մեր վառարանին, ուտելիքն էլ այն չէր, իսկ ինձ շարունակ թվում էր, որ նա իմ

մոր նման է։ Գուցե ժպտում էր նրա նման... Մայրական ժպիտը երեխ ամենուրեք նույնն է... Նա լռեց, ապա հանկարծ հարցրեց.

— Իսկ այստեղ արոտը ե՞րբ է սկսում կանաչել։ Զէ՞ որ մեզ մոտ արդեն ձնծաղիկ կա։ Դուք հիշո՞ւմ եք մեր անտառը։ Մենք շարունակ այնտեղ էինք վագում ծաղիկներ բաղելու։

Ես նայում էի պատճենեկական այդ գումատ դեմքին, միրակապով փաթաթված ծանր ձեռքին և հիշում էի ոչ միայն մեր անտառը։ Ես հիշեցի թե՛ բամբակի դաշտերը, թե՛ դեղձի այգիները և թե՛ գլխաշղոր կապած թխամազ հայ մայրերին, որոնց բարակ, ճարտար ձեռքերն ամառն աշխատում են դաշտում, աշնանը միրգ ու բամբակ են հավաքում, որոնց որդիները — եղբայրները սովորական ժողովրդի բազմամիլիոն ընտանիքում իրենց կյանքը շեն խնայում Հայրենիքի աղատության ու պատվի համար։

Յ. Պարտիզան Զավեն Միքղախանյան

Զավեն Միքղախանյանը եղեանի խոշոր
հիմնարկներից մեկի շոֆերն է եղել, բանակի է
կանչվել պատերազմի առաջին իսկ օրերին։ Կեր-
շի մոտ մղված մարտերից մեկում վիրավորվել է
Միքղախանյանը և դերի ընկել։ Գերմաներեն
հայՀոյանք, վիրավորների հառաշանք, ապ-
րանքատար վագոնի կոշտ հատակ, ահա
այն ամենը, ինչ նրա հիշողության մեջ
մնացել էր դեպի Հյուսիս տանող երկարա-
տե ճանապարհից։ Նրան բերին Վիրեցա ավանի
մոտ գտնվող Ճամբարը, Իսկ փոքր ինչ հեռու,
համարյա թե կողքին, կովում էր Լենինի աննը-
կուն, քաջարի քաղաքը։ Ռազմագերիները բոլորն
էլ գիտեին Լենինգրադի հերոսական պայքարի
մասին։ Եվ բոլորը ձգտում էին այնտեղ, դեպի
թշնամու կողմից պաշարված սովետական այդ
փոքր կղզին։ Հարկավոր էր փախչել գերությու-
նից։ Ընկերների խորհրդով Զավենը ճամբարի
պահակին ասաց, որ ինքը մասնագիտությամբ
շոֆեր է, և շուտով նրան հանձնարարե-

ցին ապրանքատար ավտոմեքենա վարել
Հաճախակի ուղևրությունների ժամա-
նակ Միրզախանյանը մանրամասնորեն ու-
սումնասիրեց ինուղիներն ու սայլուղիները,
իսկ տեղական բնակչության հետ ունեցած խո-
սակցությունից պարզեց, որ անտառի խորքում,
Լուգա քաղաքի շրջակայքում գործում է պարտի-
զանական մի բրիդադ: Ի դեպ, կարող էր ինքն էլ
գլխի ընկնել, որ պարտիզանները հեռու չեն.
Համարյա ամեն օր լուրեր էին գալիս Երկաթու-
ղային պաստառը պայթեցնելու, գերմանական
շտաբների հրկիզման, շրջակա գլուղերում գեր-
մանական կայազորների վրա կատարված հար-
ձակումների մասին: Շուտով ուղմագերիների
համբարը փոխադրվեց Նովգորոդի մոտ: Բայց
գերությունից փախչելու հեռանկարը գնալով ա-
վելի իրական էր դառնում:

Օգոստոսի մի մութ երեկո Զավեն Միրզա-
խանյանը և տասնմեկ ոուս ուղմագերիներ մե-
քենայի մեջ ավտոմատ, հրացան, փամփուշտ և
նոնակ բառնալով դուրս եկան ֆաշիստական
համբարից: Զավենը մեքենան քշեց կուպայի ուղ-
ղությամբ: Տոլմաշից ոշ-հեռու պետք էր անց-

նել երկաթուղային կամուրջը, որտեղ գերմանաւ կան ժամապահն էր կանգնած: Անաղմուկ կերպով նրան հրացանի կոթով սպանելու փորձը չհաջողվեց: Հարկ եղավ հետևից կրակել: Լսելով կրակոցի ձայնը՝ գերմանացիները կրակ բաց արին Միրզախանյանի մեքենայի վրա: Հարկադրվելով մեքենայից իջնել՝ տասներկու գերի մարտիկները փախան դեպի անտառը և թաքնվեցին ծառերի արանքում: Գերմանական գնդակները նրանցից ոչ մեկին չդիպավ: Անտառում նրանց պատսպարեցին օկուպացված գյուղերի փախստական գյուղացիները և շուտով նրանց տարան ոչ-հեռու գտնը-վող պարտիզանական շտաբը:

Այսպես Զավեն Միրզախանյանին պատիվ վիճակվեց մարտական աճեղ օրերին ընդունվել պարտիզանների մեծ, խստաբարո ընտանիքում: Հարազատ Հայաստանի արեավառ ճանապարհներից, լեռնային բարձունքներից, որտեղ ավտոմոբիլի ճանապարհն անցնում է խոր կիրճերի վրայով, նա ընկավ հյուսիսային անտառների ու ճահճների թափուտը:

Բայց ապրելով անտառի թափուտներում՝

թշնամու խորը թիկունքում, Զավենը ոչ մի օր
իրեն օտարության մեջ չէր զգում։ Թադիոն լու-
րեր էր բերում հեռավոր Հայրենիքից, իսկ ոռւ-
ընկերները հարազատ եղբայրներ էին։

Պարտիզան Միրզախանյանի հաշվին գրանց-
ված էր մի քանի տասնյակ կիլոմետր վնասված
երկաթուղային գիծ, դիպուկ գնդակով ոչնչացված
բազմաթիվ գերմանական ժամապահներ, ոչնչաց-
ված հեռադրա-հեռախոսային շատ սյուներ։

Սկսվեցին Լենինգրադի ռազմաճակատի թեժ
մարտերի օրերը։ Պարտիզանական զոկատները
թիկունքից հասցրած հարվածներով պետք է օգ-
նեին Կարմիր Բանակին թշնամու նկատմամբ
հաղթանակ տանելու։ Պարտիզանները բազմիցս
հարձակվում էին գերմանացիների վրա և զգա-
լի վնաս հասցնում։ Կարմիր Բանակի հետ պար-
տիզանները Լենինգրադի հողը մաքրեցին գեր-
մանացիներից և հարցուրավոր կիլոմետրերով
հետ քշեցին նրանց։

Եվ վրա հասավ այն պայծառ, տոնական օ-
րը, երբ ժողովրդական խիզախ վրիժառուները
դուրս եկան անտառներից ու ճահիճներից, թո-

դին գաղանների բացած կածանները և լայն ճանապարհներով առաջ շարժվեցին դեպի Լենինգրադ, դեպի այն քաղաքը, որ երկու և կես տարի նրանց ոգեշնչում էր ահեղ և անխնա պատերազմ մղելու թշնամու դեմ:

1944 թվի մարտի 1-ը ընդմիջու կմնա լենինգրադիների հիշողության մեջ: Քաղաքը դիմավորում էր պարտիզաններին: Խարույկների ծխից սևացած տղամարդիկ ու կանայք ջոկատ-չոկատ, բրիգադ-բրիգադ քաղաք էին մտնում, այրող, սառը քամուց հողմահարված, օդում կոշտացած դեմքերով: Տարբեր տեսակ հագնված, զինված ուղմաավարակին ավտոմատներով և հրացաններով, նրանք ոչ միայն Լենինգրադի ցանկալի հյուրերն էին, ոչ միայն նրա պաշտպանները: Նրանք մտնում էին քաղաք, ինչպես հարազատ տունը:

Լենինգրադիների գեմքն ուրախությունից փառում էր, շատերը արտասվում էին: Այդ արդունքները, այդ ուրախությունը տեսնում էր նաև Զավեն Միրզախանյանը, որ ավտոմատն ուսից կախած՝ պարտիզանների հետ մտնում էր Լենինգրադ, հերոս քաղաքը:

4. Ն ա մ ա կ ն ե ր ը

Նավասենյակում շարժվելու տեղ չկար: Նրա-
տարանների, տախտերի վրա և նույնիսկ հատա-
կին նստել էին ծովայիններ: Էլեկտրական լույ-
սը լուսավորում էր երիտասարդ դեմքերը, որոնք
ուշադրությամբ հետևում էին ընթերցանությա-
նը: Այդ ընթերցումը բազմիցս ընդհատվում էր
ուրախ ծիծաղով և ռեպլիկաներով: Եվ կտրվելով
գրքից՝ ևս հանդիպում էի վերին տախտից ինձ
նայող մուգ աշքերի համառ, քննախույզ հայաց-
քին: Ընթերցումից հետո ևս դեռ երկար ժամանակ
զրուցում էի ծովայինների հետ և նավասենյա-
կից դուրս եկա այն ժամանակ, երբ արդեն մըթ-
նել էր: Իմ առջև տարածվում էր սառցապատ
ֆիննական ծոցը: Դիմացի ափից լսվում էին
Հրետանային ծանր համազարկեր: «Որքա՞ն հե-
ռու եմ ևս հայրենի վայրերից», շգիտեմ ինչու
անցավ մտքովս:

— Ասացեք, դուք չե՞ք կարուառմ հագունի
տեղերին, — հարցրեց ինձ մեկը հայերեն:

Ես ցնցվեցի ահակնկալից և հոռ նայեցի: Իմ
հետեւմ կանգնած էր մի կարմիրնավատորմա-
լին, որ այնպես համառ նայում էր ինձ ընթերց-
ման ժամանակ:

— Իսկ դո՞ւք:

— Երբ ազատ եմ լինում՝ շատ եմ կարո-
տում, բայց ազատ ժամանակ համարյա թե չի
լինում,—պատասխանեց նա ժպտալով: —Պատե-
րազմ է:

Այսպիս ես ծանոթացա բալթիական ծովա-
յին, Երևանի կոնսերվի գործարանի նախկին
բանվոր Յոլակ Ավետիսյանի հետ: Պատերազմի
առաջին օրերին բանակ կանչվելով՝ նա ավար-
տել էր Մախաչկալյան ստորջրյա նավարկու-
թյան գոլրոցը: Եղել էր Յարոսլավլում, կովել էր
ծովային հետեւակի շաբքերում, Վոլոկուտմակի
մոտ: Վիրավորվել էր և վերը բուժվելուց հետո
փոխադրվել Բալթիկա: Այժմ նա ծառայում է ա-
կանորս նավի վրա:

— Նամակագրություն ունե՞ք ձեր հարա-
զատների հետ:

— Ի՞շարկե: Երեկ երկու նամակ ստացա-
՛ւ Ուզո՞ւմ եք կարդալ: Քրոջիցս է:

«Ճոլա՞կ ջան,— կարդացի ես: — Մտացանք
քո նամակը: Իմ թանկագի՞ն եղբայր, ստացանք
նաև քո անհովար պլխարկով լուսանկարը: Այն-
պէս ուրախացանք, որ նկարագրել շեմ կարող:
Մյուս օրը լուսանկարը տարանք գործարան ե-
ցուց տվինք ընկերներիդ: Դիրեկտորն ասաց,
թե մենք պետք է հպարտանանք, որ դու Բալ-
թիկայում ես, պաշտպանում ես Լենինգրադը:

Առո՞ղջ Եղիր, լավ կռվիր, իսկ մենք ապրում
ենք քո մասին մտածելով:

Համբուրում ենք քեզ կարոտով ու սիրով:
Քո քույր Կարինե:

— Այս նամակն էլ ընկերոցս հարսնա-
ցուիցն է,— ասաց Ճոլակը,— մեկնելով երկրորդ
ծրարը,— մենք միասին ենք սովորել:

«Սիրելի! Ճոլակ: Քրոջիցդ իմացա քո հաս-
ցեն և ուզում եմ մի քանի տող գրել քեզ: Հի-
շո՞ւմ ես, դպրոցում Լենինգրադի մասին ինչպիսի
հետաքրքիր բաներ էր պատմում մեզ մեր ծե-
րուկը: Այժմ դու այդ մեծ քաղաքի պաշտպանն
ես: Մեր բոլոր ընկերները նախանձում են քեզ:
Կռվի՛ր, թանկագին ընկեր, մեր հայրենիքի աղա-
տության համար, կռվի՛ր ոչ միայն քեզ համար,

այլէ քո ընկերների համար։ Դու մեր գործարաւնի միակ բալթիականն էս։

Պատերազմը կվերջանա, կդաս, կտեսնես, թե մենք ինչպես կդիմավորենք հաղթողներին։ Ամուր սեղմում եմ ձեռքդ։ Սեֆիկ։

— Պատասխանե՞լ ես նրանց։

— Թե՛ քրոջս և թե՛ Սեֆիկին։ Գրել եմ. «Մի՛ անհանգստանաք, շեմ լսայտառակի ո՛չ մեր հայրենիքը, ո՛չ էլ սովետական ծովայինի պատիվը։ Քանի որ հայրենիքն ինձ այս պոստին է նշանակել, ես այն շեմ թողնի։ Թշնամուն կիսինմ թե՛ ցամաքում և թե՛ ծովում։ Այդպես էլ գրել եմ. — «Թե՛ ցամաքում և թե ծովում»։

— Շուտով մեր ականորս նավը ծով գուրս կդա, այն ժամանակ նույնիսկ նամակ կարդալու րոպե չի լինի, ուր մնաց հայրենիքի մասին հիշելու։

Մեր գլխի վերև անաղմուկ կերպով շարժվում էր կաթնագույն բարձր լուսարձակի ճառագայթներից հյուսված վրանը։

— Իսկ առայժմ ահա իմ երկինքը, — շարունակեց Յոլակը, — ահա իմ ցեխը, — նա ցույց

տվեց նավասենյակը, — ահա իմ Հայրենիքը, —
գլխով արագ նա լենինդրադի կողմը:

Յոլակ Ավետիսյանն ինձ ոչինչ չպատմեց
իր մարտական դործերի մասին: Բայց նրա հրա-
մանատարը՝ կապիտան-լեյտենանտ Զուդովը
հետո ինձ ասաց, որ Յոլակ Ավետիսյանը իսկա-
կան բալթիական է, անվեհեր, խիզախ, հիանա-
լի ընկեր է, բազմիցս վտանգի է ենթարկել իր
կյանքը և փրկել ընկերներին:

ԱՆՆԱ. ՃՈՎ. ՃԱՆԴԻՄԸՆ. Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ


Առաջաբանի փոխարեն	3
Մեծ քաղաքի հայրենասերը. — Նիկոլայ Տիխոնով	6
Գեներալ-մայոր ԲԵՆՅԱՄԻՆ Գալստյան— Ա. Ռոզեն	12
Առջևում Հայկ Մելքոնյանն է.—Մայոր Ա. Միխայլով, Կապիտան վ. Վասի- լեսկի	22
Սերգո Ղազարյանի բնագիծը.—Մայոր Ա. Բրուսնիշկին, կրտսեր-լեյտե- նանտ Ն. Յակովլե	33
Չորս հանդիպում.—Աննա Հովհաննիսյան	39
1. Գագիկ Եսայանի նկարները	
2. Իմ հայրենակիցը	45
3. Պարտիզան Զավեն Միրզախանյան .	51
4. Նամակներ	56


Թարգմ. Ռ. Վարդապետյան
Թարգմ. Խմբագիր՝ Հ. Պարոնյան

Վ.Ֆ. 00529: Պ. 18: Տիրութ 3000. 1³/₄ տպ. մ.:

Ստորագրված է տպագրության 9/II-46 թ.

ՀԱՅՈՒ ԺԿՄ-ին կից Պոլիգրաֆիայի և հրատ. վարչության
№ 3 տպարաններեան, Ալանվերդյան Ն 65, 1946:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043426

(124)
PHOTO BY G. S. CO.

9/22/2011
A I
2011